

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

Հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և երեք անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով: Հանձնաժողովի հիմնական խնդիրները և իրավասությունները ամրագրված են «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում:

Հանձնաժողովն ունի հետևյալ կազմը.

Վարդան Մովսեսյան	նախագահ
Նիկոլայ Գրիգորյան	նախագահի տեղակալ
Աշոտ Հովսեփյան	հանձնաժողովի անդամ
Ռոբերտ Խարազյան	հանձնաժողովի անդամ
Շիրազ Կիրակոսյան	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (52 աշխատող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- Սակագնային քաղաքականության վարչություն.
- Իրավաբանական և լիցենզիոն մոնիթորինգի վարչություն.
- Հասարակայնության հետ կապերի բաժին.
- Գործերի կառավարչություն:

«ՀՀ Էներգետիկայի բնագավառում պետական կարգավորման խնդիրները»

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում տարանջատված են էներգետիկայի բնագավառում տնտեսական գործունեության, պետական կառավարման և կարգավորման գործառույթները: Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, խնդիրներն ու իրավասությունները համառոտ կարելի է ներկայացնել գործառույթների հետևյալ ամփոփ խմբով.

➤ ***Սակագների սահմանում (վերանայում), դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոփոխության կանխատեսում***

Նպատակը ինչպես սակագների սահմանումը կամ վերանայումն է, այնպես և ներդրումային, վարկային, մասնավորեցման և այլ ծրագրերի շուրջ ընթացող քննարկումների ու բանակցությունների արդյունքում դեռևս ծրագրերի մշակման փուլում ընդունված որոշումների ազդեցության գնահատումը սպասվելիք սակագների վրա:

➤ ***Տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորում***

Նպատակը էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող ընկերություններին առաջադրած պայմանների միջոցով վերջիններիս, սպառողների ու պետության շահերի պաշտպանության և հավասարակշռության ապահովումն է:

➤ ***Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ***

Նպատակը կառուցման և գործունեության լիցենզիա ստանալու համար տնտեսավարող սուբյեկտների կողմից հանձնաժողով ներկայացված հայտերի տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև կատարված ծախսերի ու աշխատանքների ծավալների արդյունավետության գնահատումը և սակագների ճշգրտման միջոցով էներգետիկայի բնագավառում նրանց գործունեության կարգավորումն է:

➤ ***Մասնակցություն բնագավառում գործող տեխնիկական նորմերի ու նորմատիվների վերանայման և դասակարգման գործընթացներին***

Այս գործընթացները պետք է իրականացվեն՝ ելնելով ՀՀ օրենքով սահմանված էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների

տնտեսական ինքնուրույնության, համակարգի անվտանգության, հուսալիության ապահովման սկզբունքներից:

➤ ***Բնագավառի տնտեսավարող սուբյեկտների միջև, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների և սպառողների միջև պայմանագրային հարաբերությունների կանոնակարգում ու տարածայնությունների քննարկում***

Գործունեության հիմքում պետք է դրվի շահերի հավասարակշռումը սպառողների և մատակարարների կամ համակարգի տարբեր սուբյեկտների փոխհարաբերություններում:

➤ ***Ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության և ներքին շուկայի համար գնման պարտադիր տարեկան քվոտաների սահմանում***

Հնարավորություն է ընձեռում անհրաժեշտության դեպքում սահմանափակել (արգելել) արտադրության առավել ցածր սակագին ունեցող արտադրող կայաններից էլեկտրաէներգիայի արտահանումը տարածաշրջանային շուկա:

➤ ***Էներգետիկական շուկայի զարգացման հայեցակարգի և անհրաժեշտ նորմատիվ-իրավական փաստաթղթերի փաթեթի մշակում***

Նպատակը էներգետիկական շուկայի ձևավորման ու զարգացման խթանումն է, ինչպես նաև մենաշնորհային գործունեության պայմաններում շուկայի մասնակիցների և սպառողների շահերի հավասարակշռումը՝ փոխհարաբերությունների (իրավասությունների, պարտավորությունների, պատասխանատվությունների) կանոնակարգման միջոցով:

➤ ***Հանձնաժողովի որոշումների նկատմամբ հասարակության վստահության բարձրացում***

Այս խնդիրը իրականացվում է հանձնաժողովի աշխատանքներում հեղինակավոր գիտնականների, մասնագետների, մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմամբ, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովմամբ:

➤ ***Հասարակական համաձայնության ինստիտուտի ձևավորում***

Ենթադրում է ակտիվ աշխատանք հասարակական կազմակերպությունների, լրատվական միջոցների և սպառողների տարբեր միավորումների հետ, նպատակ ունենալով որոշումներ ընդունելիս հաշվի առնել հասարակական կարծիքը:

➤ ***Էներգահամակարգի գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծություն***

Նպատակը համակարգի ֆինանսատնտեսական վիճակի և լիցենզավորված գործունեության արդյունավետության գնահատումն է, սակագների սահմանման և վերանայման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծումը:

Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

2000 թվականի ընթացքում հանձնաժողովը գործնական մասնակցություն է ցուցաբերել բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործընթացին առնչվող աշխատանքներին, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի մշակման աշխատանքներին, որը 2000 թվականի հուլիսի 28-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Մասնավորեցման հետ կապված փաստաթղթերի փաթեթի (բաժնետոմսերի գնման պայմանագիր, ուղղակի վաճառքի պայմանագիր և այլն) վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ և եզրակացություններ են ներկայացվել համապատասխան մարմիններ:

Մշակվել են Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցումից հետո տրվող նոր լիցենզիաների նախագծերը: Հարկ է նշել, որ հանձնաժողովի կողմից տրվող գործունեության լիցենզիաներն այն հիմնական լծակներն են, որոնցով որոշակի պայմաններ են առաջարկվում էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող ընկերություններին, պաշտպանվում և հավասարակշռվում են սպառողների, պետության և բնական մենաշնորհային գործունեությամբ զբաղվող ընկերությունների շահերը: Այդ առումով նոր լիցենզիաներում ամրագրվել են մի շարք դրույթներ, ինչպես, օրինակ, պահանջները սպառողների սպասարկման որակի նկատմամբ, այսինքն՝ այն ցուցանիշները, որոնք զարգացած երկրներում ընդունված են որպես սպառողներին որակյալ և հուսալի սպասարկման ծառայության մատուցման

որոշիչներ: Ամրագրվել են դրույթներ հատուկ նշանակության սպառողների մատակարարման առանձնահատկությունների վերաբերյալ՝ ներառյալ էներգաարտադրության սահմանափակումների պարագայում, ինչպես նաև ծախսային մասի վերաբերյալ, որոնց համաձայն բոլոր խոշոր ծախսերը՝ որոշակի շեմից սկսած, պետք է կատարվեն անցկացված մրցույթի արդյունքներով՝ նախապատվությունը տալով տեղական արտադրողներին ու ծառայություններ մատուցողներին:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ցուցաբերել նաև «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, որն ուղարկվել է ՀՀ կառավարության և բնագավառին առնչվող մի շարք նախարարությունների քննարկմանը:

Նոր օրենքում շտկվել են նախկինի թերություններն ու բացթողումները, իրավական, տեխնիկական և օրենքի տրամաբանության առումով այն ավելի հիմնավորված է, պարզ ու մատչելի: Հստակեցվել են հանձնաժողովի, պետական իրավասու այլ մարմինների և սպառողների փոխհարաբերությունները, հավելվել են էներգետիկայի բնագավառում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված նոր դրույթներ (մասնավորապես, էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության կանոնակարգման և հետագա զարգացման վերաբերյալ):

Մշակվել և հաստատվել է կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ) պայմանագրի նոր օրինակելի ձևը, որով լիարժեքորեն կանոնակարգվում են կողմերի փոխհարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրում հստակորեն ամրագրված են մատակարարումների անընդհատության սկզբունքը և հուսալիության ու անվտանգության նոր պահանջները:

Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ «Հայրուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը տրվել է բնական գազի բաշխման գործունեության նոր լիցենզիա, որում, ի տարբերություն նախորդի, հնարավորինս հստակեցվել են բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձի պարտականությունները, հավելվել են սպառողների շահերի պաշտպանությանը, մասնավորապես՝ սպասարկման որակի պահանջներին, վերաբերող նոր դրույթներ: Բնական գազի ոլորտի հետ կապված մշակվել է «Նոր գազիֆիկացման և գազամատակարարման

վերականգնման կարգի» նախագիծը, որն ուղարկվել է շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների քննարկմանը:

Հանձնաժողովը դիտողություններ, առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացրել պետական այլ մարմինների կողմից մշակված և հանձնաժողովի քննարկմանը ներկայացված մի շարք օրենքների («Լիցենզավորման մասին», «Էներգախնայողության մասին», «Իրավական ակտերի մասին») և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

2000 թվականի ընթացքում հանձնաժողովի համապատասխան որոշումներով գործունեության լիցենզիաներ են տրամադրվել էներգետիկայի բնագավառում տարբեր ուղղություններով գործունեություն իրականացնող 17 տնտեսավարող սուբյեկտների, որոնց արդյունքում նշված սուբյեկտների կողմից պետական բյուջե է մուծվել 408,0 հազ. դրամ տուրք: Լիցենզիայի պայմանների պահպանման անհրաժեշտությունից ելնելով, լիցենզավորման հայտերի տեխնիկական փորձաքննության, տեխնիկական նորմատիվների, ստանդարտների, ապրանքների ու ծառայությունների շուկայական գների տեղեկատվական բազայի ձևավորման, էներգատեղակայանքների, սարքավորումների հիմնական և ընթացիկ վերանորոգման-վերականգնման աշխատանքների ծավալների, կատարված ծախսերի փորձաքննության արդյունավետության գնահատման նպատակով 2000 թվականի օգոստոս ամսին հանձնաժողովի իրավաբանական-լիցենզիոն վարչության կազմում ստեղծվել է լիցենզավորված գործունեության մոնիթորինգի բաժին, որի մասագետներն արդեն իսկ կատարել են էլեկտրաէներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների 1999 թվականի տարեկան ծախսերի վերլուծությունը, տեխնիկական փորձաքննության են ենթարկել կառուցման և գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի տեխնիկատնտեսական հիմնավորումները:

Քնարկվել են էներգամատակարարման հետ կապված սպառողներից ստացված դիմում-բողոքները, որոնցում բարձրացված տեխնիկական հարցերը տեղերում ուսումնասիրվել են և տրվել հիմնավորված լուծումներ:

Հանձնաժողովի մասնագետների կողմից մշակված համակարգչային ծրագրի շնորհիվ ստեղծվել է էլեկտրաէներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ամբողջական տվյալներով տեղեկատվական բազա՝ լիցենզավորված գործունեության ընթացքը, նրանում ներգրավված հիմնական միջոցների հաշվառումը և օգտագործման

արդյունավետությունը վերահսկելու համար: Հաշվետվությունների վերլուծության համակարգչային ծրագրերի կիրառումը էապես կբարձրացնի լիցենզավորված գործունեության պայմանների վերահսկման և լիցենզավորված սուբյեկտների գործունեության տեխնիկական մոնիթորինգի արդյունավետությունը:

Ուսումնասիրվել են էներգետիկայի բնագավառում նոր արտադրական հզորությունների կառուցման գործունեության լիցենզիա ստանալու համար պետական մարմինների կողմից իրավաբանական անձանց անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման կարգն ու ժամկետները, որի արդյունքները և դրանց վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը ուղարկվել են համապատասխան իրավասու մարմինների քննարկմանը՝ նպատակ ունենալով խթանել ներդրումները էներգետիկայի բնագավառում:

Հանձնաժողովի կողմից փորձաքննության են ենթարկվել, ուսումնասիրվել և սահմանված կարգով գրանցվել են էներգետիկայի ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված 46 պայմանագրեր:

Սակագնային քաղաքականություն

Սակագնային քաղաքականության նպատակն է մշակել, սահմանել և ներդնել տնտեսապես հիմնավորված, հասարակայնորեն ընդունելի գնագոյացման մեխանիզմներ: Այդ իսկ առումով 2000 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի 2000 թվականի սպառման կանխատեսված մակարդակը և էներգետիկական պաշարների ծավալները, էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունների համար սահմանվել են էլեկտրաէներգիայի ազգային ցանց առաքման 2000 թվականի քվոտաները:
- Անփոփոխ թողնելով վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները, սահմանվել են արտադրող էլեկտրակայաններից 2001 թվականին առաքվող էլեկտրաէներգիայի սակագները, մեծածախ գնորդ-վաճառող «Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից բաշխող ցանցերին առաքվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները, ինչպես նաև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համար ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության սակագինը:

- Լայնածավալ նախապատրաստական աշխատանքներ են տարվել երկդրույք (հզորություն և էլեկտրաէներգիա) սակագնային համակարգի անցման ուղղությամբ, մշակվել է հաշվարկի մեթոդաբանությունը: Առաջին փուլում՝ 2001 թվականից սկսած, երկդրույք սակագնային համակարգը նախատեսվում է կիրառել հինգ խոշոր արտադրողների և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի համար: Երկդրույք սակագների ներդրումը կիրականացվի էլեկտրաէներգիայի արտադրության համար կատարված հաստատուն և փոփոխական ծախսերի հստակ տարանջատման հիման վրա, որը կապահովի կայուն հասույթի ստացումը, ինչպես նաև կնպաստի սարքավորումների պատրաստականության ապահովմանը:
- Մշակվել է փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկի նոր մեթոդաբանությունը: Հանրապետությունում հիդրոէներգիայի զարգացումը խթանելու նպատակով նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի համար սահմանվել է նաև առավելագույն սահմանային սակագին՝ 3.0 ամերիկյան ցենտի (առանց ԱԱՀ-ի) չափով, նպատակ ունենալով խրախուսել, առաջին հերթին, այդ կայաններից ամենաշահավետների կառուցումը:
- Սահմանվել են 2001 թվականին ջերմային էլեկտրակայաններից առաքվող ջերմային էներգիայի սակագները:
- Ութ բնակավայրերի համար սահմանվել են 2000-2001 թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագներ:
- Հանրապետության արդյունաբերության զարգացումը խթանելու նպատակով Երևանի ԶԷԿ -ից առաքվող 13 մթն շոգի սպառողների համար մշակվել է սահող սակագների հաշվարկման մեթոդաբանություն:
- Մշակվել է հանձնաժողովի 2001 թվականի գործունեության ծրագիրը, որը ներկայացվել է Ազգային ժողով: Կատարվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաշվեկշիռների կանխատեսումներ:

Հանձնաժողովի կողմից ընդունված սակագնային մեթոդիկան հիմնված է համաշխարհային պրակտիկայում ընդունված ընկերությունների անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա, որն ապահովում է ընկերությունների հուսալի ու անվտանգ գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը, օգտագործվող հիմնական միջոցների

իրատեսական ծառայության ժամկետից ելնելով՝ հաշվարկված մաշվածության հատուցումը և ընկերություններում ներգրավված կապիտալի դիմաց խելամիտ շահույթի ստացումը:

Ըստ հանձնաժողովի եզրահանգման՝ առաջիկա տարիներին հանրապետության էներգետիկայի ոլորտում մասնավոր ներդրումների համար ընդունելի շահութաբերության նորման կգտնվի 16 %-ի սահմաններում: Ավելի ցածր շահութաբերության նորման պարզապես կարգելակի մասնավոր ներդրումների հոսքը էներգետիկայի բնագավառ, և այն կուղղվի այլ ոլորտ:

Շահութաբերության նշված նորման, որը 2004 թվականից սկսած՝ հինգ տարվա համար ամրագրվել է մասնավորեցվող բաշխիչ ցանցերի հետ կնքվելիք սակագնային համաձայնագրի նախագծում, կիրառվում է նաև մասնավորեցված և նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներում:

Հանձնաժողովը նոր մոտեցումներ է մշակել մասնավորեցումից հետո բաշխիչ ընկերությունների նկատմամբ իրականացվելիք սակագնային քաղաքականության վերաբերյալ: Ելնելով բաշխիչ ցանցերի մասնավորեցման մասին օրենքի պահանջներից, մշակվել է սակագնային համաձայնագրի նախագիծ, որը որպես մասնավորեցման փաստաթղթերի փաթեթի մաս կներկայացվի ներդրողներին:

Լիցենզավորված ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն

Հանձնաժողովի առաջնային խնդիրներից մեկը էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց գործունեության ֆինանսատնտեսական վերլուծությունն, որը նպատակաուղղված է.

- էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց գործունեության արդյունավետության և ֆինանսատնտեսական վիճակի գնահատմանը.
- սակագների սահմանման և վերանայման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծմանը.
- լիցենզիա ստանալու հայտով հանձնաժողով դիմած ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսումային գնահատմանը:

Հանձնաժողովը վերլուծել և ամփոփել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց 2000 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնց արդյունքում վեր են հանվել հաշվետվություններում տեղ գտած անհամապատասխանությունները, նշվել թերությունները: Վերջիններիս շտկման և վերացման ուղղությամբ տնտեսվարող սուբյեկտների հետ համատեղ հանձնաժողովի առաջարկությունների քննարկման արդյունքում զգալիորեն բարելավվել է ներկայացված և ներկայացման փուլում գտնվող հաշվետվությունների տեղեկատվության որակը:

2000 թվականից էներգահամակարգի 11 խոշոր ընկերություններում հաշվապահական հաշվառումն իրականացվում է ՀՀ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներով (ՀՀ ՀՀՍ), որոնց կիրառումը նպատակ ունի բարելավելու և ներդաշնակեցնելու ֆինանսական հաշվետվությունների կազմման կանոնները, մեթոդները և սկզբունքները: Հանձնաժողովը մշակել և ներդրել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների ներկայացման նոր կատարելագործված ձևեր, որոնք համապատասխանեցված են ՀՀ ՀՀՍ-ների պահանջներին և նոր հաշվային պլանին: Այդ ձևերի ներդրմամբ հանձնաժողովը հետամտում է ստանալ կարգավորման համար անհրաժեշտ ամբողջական ամփոփ տեղեկատվություն: Միաժամանակ, հանձնաժողովի կողմից հաստատվել և լիցենզավորված անձանց են տրամադրվել ֆինանսական հաշվետվությունների լրացման հրահանգը և վերլուծության կարգը:

1999 թվականի տարեկան արդյունքներով հանձնաժողովը կատարել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց ֆինանսատնտեսական ցուցանիշների ամփոփ վերլուծություն, որում ներառվել են, մասնավորապես, էլեկտրական էներգիայի արտադրության և առաքման, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների, ֆինանսական հոսքերի, ընկերությունների շահագործման ծախսերի, վառելիքի տեսակարար ծախսերի, աշխատավարձի, բյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադամի նկատմամբ պարտավորությունների կատարման ցուցանիշների վերլուծությունը: Տարեկան արդյունքների վերլուծության ժամանակ հանձնաժողովն առաջին անգամ բնագավառի խոշոր ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող քանակական ցուցանիշների հետ մեկտեղ կիրառել է ֆինանսական

կայունությունը բնութագրող ցուցանիշների համակարգը: Վերլուծության արդյունքները հրապարակվել են Ազգային ժողով ներկայացված հանձնաժողովի 2001 թվականի գործունեության ծրագրում:

Հանձնաժողովը մասնակցել է նաև բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործընթացով պայմանավորված՝ համակարգի ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերակառուցման միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքներին:

Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում են սպառողների շահերի պաշտպանությունը, նրանց հարցադրումներին, դիմում-բողոքներին և ահազանգերին պատշաճ լուծում տալու ուղղությամբ տարվող աշխատանքները:

2000 թվականի ընթացքում ստացվել են 165 գրավոր ու բանավոր (հեռախոսազանգով) դիմում-բողոքներ և ահազանգեր, որոնցից 145-ը՝ բնակչությունից, 20-ը՝ իրավաբանական անձանցից: Բոլոր հարցադրումներին տրվել են համապատասխան պարզաբանումներ, վիճահարույց հարցերը քննարկվել են շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և ստացել համապատասխան լուծում:

Դիմում-բողոքների և ահազանգերի վերլուծության արդյունքների ամփոփումը ցույց է տվել, որ բարձրացված հարցերի գերակշիռ մասը վերաբերում է մատակարարի կողմից էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրմանը և պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը: Քիչ չեն դեպքերը, երբ դիմում-բողոքներում բերված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, և ուսումնասիրությամբ պարզվում է, որ խախտող կողմը սպառողն է:

Դիմում-բողոքներում բարձրացված հարցերին հստակ լուծում տալուն հաճախ խոչնդոտում են որոշ օրենքների և իրավական ակտերի անկատարությունը կամ դրանց միջև առկա հակասությունները: Այդ իսկ պատճառով հանձնաժողովի կողմից առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարություն՝ որոշ օրենքներում, գերատեսչական և նորմատիվային իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովն իր գործունեության մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացրել զանգվածային լրատվական միջոցներով: Մամուլում հրատարակվել են 10 հաղորդագրություն, 4 հարցազրույց, մեկ ակնարկ: Հասարակության հետ կապերի ծառայությունը և լրատվամիջոցները հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հրապարակել են 22 հոդված, մեկ ակնարկ: Կազմակերպվել են կլոր սեղաններ և բանավեճեր:

Ազգային ռադիոյի «Թեմա պլուս», «Անդրադարձ» հաղորդաշարերով իրենց ելույթներում հանձնաժողովի փոխնախագահը, անդամները և աշխատակազմի մասնագետները լուսաբանել են բնագավառին առնչվող հրատապ խնդիրները:

Ազգային հեռուստատեսության և մի շարք մասնավոր հեռուստաընկերությունների եթերով հանձնաժողովի նախագահը, անդամները և մասնագետները հասարակությանը իրազեկ են դարձրել հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականության, լիցենզավորման, տնտեսավարող սուբյեկտների ու սպառողների շահերի հավասարակշռման խնդիրներին:

Հասարակությանը հանձնաժողովի մասին լիարժեք տեղեկատվություն տալու նպատակ է հետապնդել նաև Ազգային հեռուստատեսության «Կապիտալ» հաղորդաշարով հեռարձակված՝ կարգավորող մարմնի գործունեությունը լուսաբանող հանրամատչելի ֆիլմաշարը:

Շարունակվել և ամրապնդվել են կապերը հասարակական մի շարք կազմակերպությունների հետ: «Սպառողների միության» և այլ կազմակերպությունների մասնակցությամբ բազմիցս քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Քննարկվել և արդյունքում հաշվի են առնվել «Բնական գազի մատակարարման (կենցաղային սպառման) օրինակելի պայմանագրի» նախագծի վերաբերյալ նրանց առաջարկությունները:

Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Հանձնաժողովը, կարևորելով էներգետիկայի բնագավառում կարգավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման անհրաժեշտությունը,

համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների կարգավորող հանձնաժողովների հետ:

Տարվա ընթացքում հանձնաժողովի մասնագետները մասնակցել են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից Բալթյան երկրներում և Լեհաստանում կազմակերպված տարածաշրջանային շուկայի ներդրման փորձի ուսումնասիրությանը նվիրված սեմինարներին, որոնցում քննարկված խնդիրների և այլ երկրների փորձի ուսումնասիրումը ցույց տվեց, որ հարևան երկրների հետ միասնական էներգահամակարգի ստեղծումը և շուկայական հարաբերությունների ներդրումը Հայաստանի համար տնտեսական զգալի շահավետությունից, սակագների իջեցման հնարավորությունից զատ, կարող են նաև ստեղծել տարածաշրջանում քաղաքական իրավիճակի կայունացմանը նպաստող լուրջ նախադրյալներ:

2000 թվականին շարունակվել է համագործակցությունը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի Կարգավորող հանձնաժողովի հետ: Օգոստոս ամսին նահանգի առաջատար մասնագետները Երևանում անցկացված սեմինարների ընթացքում հանձնաժողովի մասնագետներին ծանոթացրեցին իրենց կողմից սակագների ձևավորման, մշակման, հաստատման, սպառողների սպասարկման, էներգամատակարարման որակի չափանիշների ուսումնասիրման, սպառողների շահերի պաշտպանության, սպառողների կրթական մակարդակի բարձրացման և իրագեկման ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Հանձնաժողովի մասնագետները մասնակցել են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Կարգավորող հանձնաժողովների ընկերակցության կողմից կազմակերպված համաժողովներին:

Համաժողովների օրակարգերում ընդգրկված են եղել մասնակից երկրների կողմից նախապես բարձրացված ամենահրատապ հարցերը, որոնց վերաբերյալ ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները միստերի ընթացքում քննարկվել և ամփոփվել են:

Հանձնաժողովի մասնագետները 2000 թվականի դեկտեմբերին մասնակցել են Բուխարեստում տեղի ունեցած Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի երկրների էներգետիկական ոլորտի կարգավորման հարցերին նվիրված հերթական ամենամյա համաժողովին: 1997 թվականից գործող այս

կառույցի մշտական գործող սակագնային կոմիտեի նախագահը ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահն է:

Հանաժողովի ընթացքում ստեղծվել է նշված երկրների կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցություն (ERRA), որի նպատակը էներգետիկայի բնագավառի կարգավորող մարմինների միջև տեղեկատվության ու փորձի փոխանակումն է և կարգավորման խնդիրների վերաբերյալ միասնական մոտեցումների մշակումը:

Հանձնաժողովի նախագահն ընտրվել է 15 երկրներ ներկայացնող ընկերակցության նախագահության անդամ:

Հանձնաժողովը մասնակցում է USAID, TACIS, UNDP և այլ կազմակերպությունների ծրագրերով Հայաստանում իրականացվող նախագծերի քննարկումներին, հաշվետվությունների փորձագիտական գնահատումների աշխատանքներին, ինչպես նաև նոր նախագծերի տեխնիկական առաջադրանքների մշակումներին: Հաշվի առնելով էներգետիկական նոր տեխնոլոգիաների ներդրման բացվող հեռանկարները (հողմի, արևային և այլն), հանձնաժողովը աշխատանքներ է տանում արտերկրի գործընկերների հետ՝ ուսումնասիրելու և հաշվի առնելու այդ բնագավառներում գնագոյցման և իրավական դաշտի առանձնահատկությունները:

**ՀՀ Էներգետիկայի հանձնաժողովի գործունեության ֆինանսական
հաշվետվությունը**

**ՀՀ Էներգետիկայի հանձնաժողովը 2000 թվականին ֆինանսավորվել է ՀՀ
պետբյուջեի միջոցներից**

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /Ճշտված/ /հազ.դրամ/	Ֆինանսավորու մ /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
1.	Աշխատավարձ	51974.0	51974.0	51974.0
2.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	9949.5	9949.4	9488.0
3.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	2128.0	450.0	778.7
4.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	1870.0	1850.0	1864.0
5.	Կապի ծառայությունների վճար	3463.7	1533.8	3521.8
6.	Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր	1650.0	1100.0	1820.4
7.	Ջրմուղ կոյուղուց օգտվելու վարձ	60.0	25.0	60.0
8.	Տրանսպորտի ծառայությունների վճար	6080.0	3050.0	4497.6
9.	Ներկայացուցչական ծախսեր	350.0	50.0	50.0
10.	Այլ ծառայությունների ծեռք բերման ծախսեր	1700.0	--	--
11.	Շինությունների եվ սարքավորումների վարձակալության ծախսեր	14310.0	7630.0	11280.0
	Ընդամենը	93535.2	77612.2	85334.5